

## Տ. ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Սարգիս)

Ծնվել է 1961 թ. հոկտեմբերի 17-ին Հրազդան քաղաքում:

1968-1978 թթ. սովորել է Երևանի № 135 միջնակարգ դպրոցում:

1979-1983 թթ. սովորել է Երևանի պետական ֆիզկուլտուրայի ինստիտուտում:

1983-1992 թթ. սովորել է Էստոնիայի Տարտու քաղաքի Դորպատի անվան պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում՝ այդ ընթացքում ծառայելով նաև Սովետական Միության զինված ուժերում:

1992-1995 թթ. սովորել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության Ընծայարանում:

1993 թ. ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի:

1995 թ. հուլիսին Երուսաղեմում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հովհաննես առաքյալի քարոզչությունը և առաքելությունը» թեմայով:

1995-1999 թթ. ծառայել է Ս. Հարության Տաճարում որպես լուսարար սարկավագ:

2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է քահանա: